

տակութիւնը՝ յայտնի փաստերով չհաստատուիր, մեր իրաւունք
կունենամք պնդել ինչ որ մեր ստացութիւնն է և ինչ որ եկեղեցիա-
կան աւանդութեան և առաքելական հաստատութեան համաձայն
է, այսինքն թէ Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետական ա-
թոռ ինքնագլուխ և ազատ է անկասին ի սկզբանէ, ըստ կանո-
նաց առաքելոց և ըստ սոփորութեան նախնեաց, յորոց կը քաշէ
և Ս. Ժողովն Նիկիոյ ինքնագլուխ պատրիարքական աթոռոյ ի-
րաւունքները:

(Նախաձեռնել)

Մարտիա Նովիկովսկայ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՂԱՅԵՏԵՅ:

(Շ-Բ-Ն-Է-Ն-Բ-Ն, ԱԲ-Բ-Մ 1886 թ. ԺԲ.)

ՅՈՒՌԱՅ Ե.

ՀԱՄԱԶԱՍՊ ԳԱԻԹ.

Անուանի է և ի շինուածս փանից Հաղարատայ մեծակառոյց գա-
ւիթն Համազասպ անուն, կերտեալ կոթածոյ և որձասառ ջա-
րամբք, զորմէ ոմանք տսեն լինել Ատեան խորհրդոյ թագաւորաց
մերոց և իշխանաց, իսկ այլք տսեն զնա գոլ ժամատուն, բայց
հայեցեալ ի քառակուսի շինուածս սորա չունի զնմանութիւն
ժամատան, մանաւանդ զի ի հնումն ժամատուն շինէին առ դրան
տաճարաց, այլ թէ զի՛նչ և վասն է՞ր է կառուցեալ այս մեծ շի-
նուած ո՛չ ի սլաամութեանց և ո՛չ յաւանդութեանց ունիմք զըս-
տոյգ պիղեկութիւն:

Արտաքին երեւոյթ այսր գիւթի է զարմանալի յոյժ, գոգցեն
ահագին իմն բլուր կանգնեալ, այլ ձեռն ճարտար արուեստաւորի
այնպիսի իմն գեղազարդեալ է զգոհարատառ քարինս նորա
մինչև զՄայիսեան ծաղկազարդ բլրակի բերել զնմանութիւն, ի
տես որոյ յիրաւի չյագին աչք հայեցողաց ի նա:

Այս շինուած ծածկեալ է քառանկիւնաձեւ ի վերայ չորից մեծամեծ սեանց առանց կաթուղիկէի, այլ ի հնութենէ ժամանակին քաղութք ի ձեւաւանց նորա կործանեալ են ի վայր, և այլք ի կիր արկեալ են ի պէտս վերանորոգութեան մեծի տաճարին, ուստի ի տեղալ անձրեւաց ի ներքս թափանցեալ ծովանայ ջուրն, և յաղայն լինելոց է պատճառ կործանման այսր ի կարգս հրաշից եղեալ շինուածոց: Այլ եթէ ձեռն օգնականութեան տացեն ումաք ի բարեպաշտ անձանց՝ միտքանութիւնն անյապաղ կարէ ձեռնարկել ի վերանորոգութիւն սորա, նոյնպէս և ամենայն շինուածոց վանացս՝ որք ի հնութենէ մերձ են ի յաւերումն: Ասան վերանորոգութեան վանացս ոչ աւելի քան 43000 ռուբլի արծաթ ծախք լինին: — Ուստի եթէ վեցք ի բարեպաշտօն անձանց աղգիւ մերոյ՝ բաժանեացեն ի միջի իւրեանց զոյս շնչին գումար, կարեն յախտեճական յիշատակ կացուցանել ինքեանց նորոգմամբ վանիցս հանգոյն աստուածասէր նախնեաց իւրեանց:

Ի մտանելդ ընդ միակ դուռն արեւմտից ի ներքս այսր գաւթի երեւի բոլոր ընդարձակութիւն ներքին շինուածոց՝ արժանի տեսանելոյ: Նրկայնութիւն սոյն գաւթի է 39 արշին, նոյնչափ և լայնութիւնն, իսկ բարձրութիւնն 49, և թանձրութիւն որմոյն 8՝ ոտնաչափ: Այս ընդարձակ շինուած կառուցեալ է ի վերայ չորից միակտուր սեանց, որոց բարձրութիւնն լինի երեք կանգուն, յերկոսին ծայրս իւրաքանչիւր սեանցն ելանեն քառակուսի ճարտարաշէն կամարքն շքեղ քանդակագործութեամբք մինչև ցկամար վերին յարկացն, ուր կերտեալ են չորս քերութաքանդակ խորշք, յորս ցայսօր ժամանակի երեւին օղակք, զորոց կախեալ են երբեմն զլուսացնցուղ ջահս՝ որպէս ասեն, յաւուրս արքունի մեծահանգէս տօնից կամ ժողովոց: Այս գաւթի ի չորից կողմանց ունի զնեղ լուսամուտս ի չափ կատարելահասակ մարդոյ, իսկ արեւմտեան լուսամուտն է բոլորակ ի ձեւ լուսաճաճանչ արեգական:

Յարեւելեան որմն այսր գաւթի յաղայն բացեալ են զդուռն և արտաքոյ նորին շինեալ են զփոքրիկ եկեղեցի ըստ Յունական ձեւոյ աստիճանաւ ի գաւթէն ի վեր ելանելի, այլ թէ երբ, և վասն էր արարեալ են զայն, չիք ստոյգ տեղեկութիւն: Զօրքասաշ քարինս ներքին սաղայատակի այսր գաւթի նոյնպէս հանեալ, ի կէր արկեալ են ընդ ժամանակս ժամանակս ի պէտս նորոգման

մեծի տաճարին, ուստի զտեղիս հանեալ քարանցն լցուցեալ են կրազանգ ցեխով: Իսկ յաւուրս մեր զքարինս սալայտաւի միջնայարկի վերանորոգեաց սրբակրօն Քաղէսս վարդապետն Տէր Յակոբեանց ի ժամանակս վանահայրութեան իւրոյ և մտքեալ զայս հրաշակերտ գաւիթ՝ արար տեղի և տուն աղօթից, որ ի վաղուց անտի խափանեալ կայր յանհոգութենէ վերատեսչաց վանացս:

Այս գեղեցկաշէն գաւիթ շինեալ է ի Տէր Յովհաննէս արքեպիսկոպոսէ Համազասպ կոչեցելոյ, ոյր սակս և այս գաւիթ յանուն նորա կոչեցաւ Համազասպ: Նմանապէս և Նիրակոս գրէ, Սա (Համազասպ) շինեաց եկեղեցի հրաշալի, և տեղի՝ ուր զանգակն կախեն, և ժամատուն մի մեծ և սքանչելի: (Տ. Ո. էջ 56): Կարծեմ՝ այս Համազասպ գաւիթն է, զոր մեծ և սքանչելի ժամատուն կոչէ Նիրակոս. բայց ո՞ւր է այժմ այն հրաշալի եկեղեցին, զոր շինեաց Սա. արդէն չերևի ի Հաղբատ. զի իւրաքանչիւր եկեղեցեաց՝ գաւթից՝ մատուանց շինողք յականէ յանուանէ յիշատակին յարձանագիրս: Այլ արդէն գշինութենէ Համազասպ գաւթի ի վկայութիւն բերից աստուծոյ զարձանս գրութիւնն, զվարագրեալն ի վերայ ճակատաքարին մեծի դրան: «Ի թուականիս Հայոց 29. (1257) ի տէրութեան մեծին Շահնշահի Զարարիայի շինեցաւ մեծ ափաւ տունս Աստուծոյ ի Տէր Համազասպայ. որում ողորմեսցի Քրիստոս, բարի հոգւոյ նորա: Ամէն:»

Ըստ կարծեաց իմոց Նիրակոս ժամատուն կոչելովն՝ ցուցանէ զհրաշալի շինուած գաւթիս, որ այժմ Համազասպ կոչի. քանզի ոչ տեսանեմք այժմ ի Հաղբատ զայլ առանձին շինուածս ի Տէր Համազասպայ բաց ի շքեղաշէն եկեղեցագաւթէս և ի հրաշակերտ զանգակատանէն: Ի մէջ Համազասպայ դամբարանք են այսու արձանագրութեամբ:

- 1) Այս է հանգիստ Ամիր Սարգսի՝ Խանութ երիցու որդւոյն:
- 2) Այս է հանգիստ Խիկարին՝ Գրիգոր աւագ երիցու որդւոյն:
- 3) «Զնասրագին ՇՂԴ (1145)՝ մհացածն եղծեալ է:

ՅՕԴՈՒՆԸ Ը.

ՊՈՂՈՏԱԶԵԻ ԴԱԻԻԹ ԱՐԵՒԵԼԵԱՆ:

ՅԱՐԵՒԵԼԻՑ ՄԵՇԻ ՏԱՃԱՐԻՆ.

Ընդ մէջ մեծի տաճարին և Համազասպ կոչեցեալ շինուածոց է սղախառն գաւիթ, որ շո. քջ պատեալ ի հիւսիսայ և յարեւելից

զկաթուղիկէ եկեղեցեաւն ելանէ ցդուռն սենեկաց միաբանից։ Այս գաւթի ի հիւսիսոյ սիւնապատ որմովք աղեղնաձեւ կամարօք ելեալ բարձր ի վեր մինչեւ ցհիւսիսային լուսամուտս մեծի տաճարին, և ապա խոնարհեցուցեալ զգլուխ իւր միանայ ընդ հաստահեղոյս որմոց կաթուղիկէ եկեղեցւոյն։ Յոլոր յատակ այսր պողոտաձեւ գաւթիս ծայրէ ի ծայր սալեալ է ստուար և կոփածոյ գերեզմանաքարօք, այնպէս կից առ կից դասակարգեալ են տապանաքարքն մինչեւ այլ ևս չեն պիտոյ եղեալ այլ քարինք սալայատակի։ Ի մտանել ընդ հիւսիսակողմն ի գաւթի այսր տեսանի գերեզման Հոնաւոր իշխանի որդւոյ Մկան իշխանաց իշխանի, ունելով ի վերայ զկամրակապ ծածկս, յորոյ վերայ արտաքուստ կառուցեալ կայ առանձնակի քարաշէն փոքրաղիր մատուռ, այնու մտօք զի ի ժամ աստուածանուէր պատարագի ի վերայ սեղանոյ այսր մատռան, ոտք ժամարար քահանային ուղղակի կացցեն ի վերուստ ի վերայ շիրմի նորա, որ է ի մէջ կամարակապ ծածկոցին։

Ի գաւթի աստ ի վերայ գերեզմանի Հոնաւոր իշխանի կանգնեալ կայ խաչաքար, և շուրջանակի զխաչիւն գրեալ է այս արձանագրութիւն։

« Ես Հոնաւոր որդի Մկան իշխանաց իշխանի՝ անժամանակ ելի ի կեցոց և սուգ մեծ թողի ծնողաց իմոց, արդ որք կարգայք, զիս յաղաւթս յիշեսցիք։ Ի թուին Հայոց ՆՀԲ. » (1003)։

Մերձ սորա ի ճակատ կարմիր քերուբաքանդակ խաչաքարին գրի այսպէս։

« Քրիստոս ողորմի Վաչէի յիւրում գալստեան։ Թ. ՌԾ » (1201)։

Առաջի խաչաքարացս են շիրիմք աւանաւոր իշխանաց, պատուեալք կոփածոյ ստուար գերեզմանաքարօք առանց տապանագրաց, — Ի վերայ լայնանիստ տապանաքարի Յիթվասան իշխանի եղբօր որդւոյ Յովհաննէս արքեպիսկոպոսի կանգնեալ կայ կից ընդ որմն հսկայաձեւ մեծ խաչաքար որ ունի զմիւսնոյն օրինակ արձանագրութեան, որ ի յետուստ կուսէ Ամենափրկիչ խաչին։

Ի վերայ կամարակապ ծածկոցիս որմոցն գրի այսպէս։

« Ես Մինաս վարդապետս Խրամաձորի այգին գնեցի, բահրէն սուրբ Նշանիս վախմ տուի, ով որ հակառակի, սուրբ Նշանէս կապած լինի »։ « Ես Փռլատ բէգս տեսի, և այլ վերստին հաստատեցի նմա, ով խափանիւ ջանայ, նղովեալ եղիցի »։

Հանդէպ գերեզմանին Յիթվասանայ յարեմուտս գրեալ է։

« Շնորհաւք բարերարին Աստուծոյ . . . իշխան Հատան Արմանեանց, և որդիք իւր Վաչէ և Յիթվասան միաբանեցան Հաղբատայ, և նուիրեցին ընծայս սուրբ Նշանիս, և մեք Տէր Յովանէս կամակցութեամբ եղբարցս՝ սահմանեցաք նոցա զսուրբ Գրիգորին ուրբաթ աւրն սլատարագ զամէն եկեղեցիքս: Աստարողքն աւրհնին յԱստուծոյ »:

Զառաջեալ գրատանն ի հիւսիսոյ մեծի տաճարին և յետուսն Ամենափրկիչ խաչին են երկու փոքրիկ սաղաւէն խորանք, ունելով ի միջի զսլատարագամասոյց սեղանս փոքրիկ բեմաքարօք: Զմին ի խորանաց աստի շինեաց մեծանուն իշխանն Պաճաճ որդի Լիպարտի Տեառն Սիւնեաց. իսկ միւսն ամուսինն նորա Գուգայ յազգէ Մամիկոնեանց վասն յիշատակի իւրեանց: Ի վերայ սրբատաշ քարանց միջին որմոց արտաքուստ ընդ մէջ դրանց երկուց խորանացն փորագրեալ է այսօրինակ արձանագրութիւն:

« Ի թուին ԶԻԹ (1280) յիշխանութեան տեղւոյս Պարոն Սաղունին՝ ես Պաճաճ որդի Լիպարտի և ամուսինն իմ Գուգայ յազգէ Մամիկոնեանց միաբանեցաք սուրբ Նշանիս Հաղբատայ և զսուրբ Գրիգոր Լուսաւորչի՝ որ վկայաւք ստոյգ նորա ճգոյթն առ մեզ էր Նախնեաւք. զայն ի ի խնդրոյ եպիսկոպոսիս և միաբանանայս ընծայեցաք ի սուրբ կաթուղիկէս և այլ արգիւնս: Տէր Յովանէս և միաբանքս սահմանեցին տաւն Սուրբ Գրիգորի ծակամարի (Մուտն ի Վիրասլն) շարաթ աւրն՝ և զշաբաթն և զկիւրակէն զամեն եկեղեցեացս սլատարագն մեզ առնեն, և ետուն մեզ տուն և այգի և զինչ էլ միաբանից: Աստարիչքն աւրհնին յԱստուծոյ »:

Ի վերայ սեմոց միւս խորանին գրեալ է գեղով:

« Ես Շնորհաւորս . . . միաբանեցաք սուրբ ուխտիս Հաղբատայ և ըստ մերում կարեաց ընծայեցաք արգիւնս եկեղեցւոյն, միաբանքս սահմանեցին Ա. սլատարագ ի տաւնի Յովհաննու աւետարանչին, որքան մեք կենդանի (եմք) մեր ծնողացն, և յետ մեր ելից, մեզ կատարեն: Աստարիչքն աւրհնին յԱստուծոյ »:

Առ դրան երկուց խորանացս, ի թիկունս կոյս Ամենափրկիչ խաչին է թագազարդ գերեզման Պաճաճ իշխանին՝ այսու տապանագրաւ:

« Այս է հանգիստ Պաճաճ բարեպաշտ իշխանի որդւոյ Լիպարտի »: Կից սորա է շիրիմ ամուսնոյ նորին Գուգայի այսու տապանագրութեամբ: « Այս է հանգիստ Գուգայ տիկնոջ յազգէ Մամիկոնեանց »: Ի մերձակայ վայրի աստ են և այլ գերեզմանք հա-

Հասար յատակին առանց տապանագրաց: Իսկ զայլ երկու տրձա-
նագրութիւնս ի վերայ հիւսիսային որմոց կաթուղիկէ եկեղեցւոյն
կարգաւ դիցուք ի ստորեւ: Ի յետուստ խաչին ի վերայ կամարի
մեծի եկեղեցւոյն կայ գրեալ այսպէս: « Յուսովն Աստուծոյ ծա-
ռայ սուրբ նշանիս Հաղբատայ Իվանէ առաջին քաղաքացի և ա-
մուսինն իւր Վարդենիկ շատ արդեամբք միաբանեցան սուրբ ուխ-
տիս: Եւ մեք Տէր Յովհաննէս լրմամբ եղբարցս սիրով ընկալաք,
և ըստ մեծի մասին յուսոյն իւրեանց տուաք նոցա կիւրակէին ե-
րեք շաբաթ աւրն պատարագ, ամէն եկեղեցիքս առնեն: Կատա-
րիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ, խափանիչքն դատին ի Տեառնէ: »

Ի ներքոյ սորա:

« Կամա՛ք բարերարին Աստուծոյ Պատրոն ձխմն ծերն և ամու-
սինն իւր միաբանեցան սուրբ ուխտիս Հաղբատայ, Մեք Տէր Յով-
հաննէս և եղբարքս տուաք նոցա զՎարագայ Խաչի տաւնն, որչափ
կենդանի են իւրեանց ծնողաց և յետ ելից սոցա պարտ են անխա-
փան կատարել: Կատարիչքն աւրհնին: »

Մերձ սորա:

« Ի թուին 262 (1267) շնորհիւն Աստուծոյ ես մխիթար քա-
հանայ որդի Աւշնին սնուցած տէր Յովանի ետու զարդիւնս ի ի-
նութիւն սրահայարկ գրան կաթուղիկէիս, և մեք Տէր Յովանէս
կամակոյտութեամբ եղբարցս սահմանեցաք Բ. պատարագ քախտու ըին
ի տաւնի Պարասիւնի? » Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ, ամէն: »

ՅՈՒՈՒԱԾ Ք.

ԱՄԵՆԱՓՐԿԻԶ.

Մի յառանձին արժանայիշատակ հնութեանց վանացս է Աս-
տուածընկալ սուրբ խաչն Աճեալիչն ճարտար քանդակագործու-
թեամբ, զորս ոչ թէ բանիւ մարթէ նկարել, այլ ճարտար պատ-
կերահանի գործ է գրոշմել զայն ի թղթի, կամ եթէ մարթ ինչ
էր զսքանչելի քանդակագործութիւն սորա ի վերայ միակտուր ար-
ձանի՝ արժան էր անձամբ անձին մատուցանել ի տես հնասիրաց,
զի քաջ ծանօցեն զճարտարապետութիւն մերազանց ի սոյն գերա-
պանծ արուեստի: Քանզի ձեռք այժմեան նկարչաց զանազան ե-
րանգօք հաղիւ ի պատտառս և եթ զօրեն նկարել դոյն, զոր նախ-
կին ճարտարապետութիւն Հայոց քանդակեալ է ի յորձատաշ
վէմն:

Այս գեղեցկաքանդակ խաչ կանգնեալ է ի վերայ ստուար սրտաւանդանի չորս կանգուն բարձրացելոյ յերկրէ, և ի սիրա հրակայաձեւ արձանին մեծադիր խաչն Փրկչական ունելով յիւր վերայ փորագրած վսեմ պատկերաւ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, և գրեթէ՝ Արարիչն արարածոց արդէն իսկ կենդանի նկարագրութեամբ տարածեալ զբազուկս իւր ընդդէմ աստեղաց և խոնարհեալ զգլուխ իւր ընդ հարաւ աղաղակէ առ Հայր ի յերկինս:

« Հայր ի ձեռս քոյ աւանդեմ զհոգի իմ »:

Ի ստորոտ խաչին կացեալ կան տիրամայրն Մարիամ և միւս Մարիամ Մագթաղենացին և այլ երկու կանայք ի ծունկս անկեալ, որք տրամալի հայեցմամբ պշուցեալ են ի խաչ ելեալն Յիսուս: Խաչն Փրկչական և պատկերքն զարմանագործք շրջապատեալ են լուսաձեւ նուրբ կամարաւ, ի վերայ խաչին նկարեալ է և ամպ հովանի ի ծածկոյթ մերկութեան Արարչին մերոյ:

Նուրջ զլուսաձեւ կամարաւն ճարտար իմն կերտուածովք քանդակեալ են հաւասար թուովք ընդ յաջ և ընդ յահեակ պատկերք Աւաքելոցն, որք բարձրացուցեալ զձեռս իւրեանց՝ ափշեալ հային ի խաչ ելեալն Աստուած: Ի վեր քան զպատկերն խաչելութեան Տեառն խոնարհեալ տեսանին պատկերք երկուց սաւառնաթեւ սլացեալ սերովքէից, որք ի ձեռս իւրեանց ունելով զսկիհ (զբաժակ) գան ի սպաս աստուածամարդ խաչեցելոյն և ի ժողովումն հոսման արեան Փրկչին յերկուց բլեռեալ ծակեալ ձեռացն և ոտից: Իսկ ի վեր քան զայս ի կապուտակ հաստատութեան երկնից կացեալ կայ արեգակն խաւարեալ յաջակողմն, իսկ խաւարամած լուսինն ի ձախակողմն: Փառահեղ խաչն կանգնեալ է ի վերայ երկրագնդի աշխարհիս, ուր գոյ և գլուխ Ազամայ նախաստեղծին, շուրջ զորով քանդակեալ է մակագրութիւնս: « Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց » և ապա տւրնթեր սորին « Սուրբ Աստուած, Սուրբ և հզաւր, Սուրբ և անմահ՝ որ խաչեցար, ողորմեա՛ Տէր Յովհաննիսի սուացողի սմա »: Իսկ ի վերայ քարտիղին որ ի գլուխ խաչիս փորագրեալ է մակագրութիւնս այս՝ « Սա է թագաւոր Հրէից » և ապա « Ձեռք՝ որ զերկինս արարին՝ տարածեցան ի խաչիս »: Այս ամենայն շրջապատեալ են քերութեանդակ և ճարտարագործ սեամբք:

Ի գլուխ այսր գեղեցկաքանդակ միակտուր խաչի ամրացուցեալ է այլ իմն վերադիր արձան, որ հսկայաձեւ յօրինէ զճարտա-

բաշէն խաչն Փրկչական իրբն պսակ ի քարէ պատուականէ ե-
դեալ ի գլուխ նորա: Ի վերադիր արձանին գեղեցիկ իմն նկա-
րիւք քանդակեալ է պատկեր Համբարձման Քրիստոսի առ Հայր-
որ զկնի աւանդելոյ առաքելոց իւրոց զկամս իւր և զՀօր, վերա-
ցեալ է և ամպն կալեալ զնա յաչաց նոցա: Ի վեր քան զամպն
պատկերի Համբարձման Քրիստոսի վերտառեալ է խոշոր տառիւք
մակագրութիւն ինչ օրինակ զայս « Համբարձառ. Աստուած աւրհ-
նութեամբ և տէր մեր ձայնիւ աւրհնութեամբ: *) և ապա
« Փառք Տեառն ի տեղւոջ իւրում » ընդ աջ և ընդ ահեակ պատ-
կերին Համբարձման նկարեալ կան պատկերք երկուց հրեշտա-
կաց, վառեցելոց բոցեղէն սրովք, և երկուց արանց ծածկելոց
սպիտակ հանդերձիւք, որք թուին գոլ վիայք Համբարձման Քրիս-
տոսի, երևեալք Առաքելոցն զկնի Համբարձման նորա՝ որպէս
գրի ի Գործս Առաքելոց**): Մինչդեռ պշուցեալ էին (Առա-
քեալքն) ընդ երկինս երթալոյ նորա, ահաւասիկ՝ արք երկու
երևեցան նոցա ի հանդերձս սպիտակա աւետարանել նոցա զմիւս-
անգամ գալստենէ նորա մեծաւ փառօք:

Զայս Ամենափրկիչ խաչն հրաշալի կանգնեաց Տէր Յովհաննէս
վասն օր'ւշատութեան Աթարէգ Ամիր սպասաւար Պարոն Սա-
թուհին և զաւակաց նորա և յանանց յիշատակ իւր և ծնողաց
իւրոց: Ի ստուգութիւն որոյ եղից աստանօր զարձանագրու-
թիւնն, որ ի յաջ կողմն սոյն խաչի « Ի թուին ԶԻՅ (1273) յիշ-
խանութեան և ի տէրութեան սուրբ ուխտիս Աթարէգ Ամիր
սպասաւար Պարոն Սաթուհին՝ ես Տէր Յովհաննէս կանգնեցի
զիաչս Ամենափրկիչ աւգնական Պարոն Սաթուհին և յիշատակ
հոգւոյ իմոյ »: Սոյն արժանայիշատակ Տէր Յովհաննէս փայլեալ
մեծագործութեամբ և առաքինական վարուք վախճանեցաւ սոտ
ի Հաղբատ և ամփոփեցաւ առաջի Ամենափրկչիս ի դամբարանի,
որոյ տապանագիրն է: « Այս է հանգիստ Տէր Յովհաննիսի
թուին ՊԻԴ. (1375): Մերձ սորա « Աբլհասան »:

(*) Ի Սաղմոսին գրի « Ն-ն-է- 4-ւ-ւ-յ »:

(**) ԳԼ. Ա. համար 10.

ԱՐԶԱՆԱԳՐԱԽԹԻՒՆՔ.

Ի թիկանց Ամենափրկիչ խաչին.

«Շնորհաւք սուրբ Երրորդութեան և ողորմութեամբ սուրբ Նշանիս՝ ես Տէր Յովհաննէս նուաստ ծառայս ծառայիցն Աստուծոյ շինեցի զգաւթս զգրատունս և զսրահս նորին. ածի զպաղատն (սառնիճ՞) զլիճն և ետու կազմել զմեծածախ պահարանն Բրդաձորոյ ռուրբ Նշանին. Կնեցի զգիւղն Բաւլայ և ընծայեցի սուրբ Նշանիս. կանգնեցի զխաչս վասն արեւշատութեան Աթաբէգ Ամիր սպասաւար Պարոն Սաթուհին *) և զաւակաց իւրոց և յիշատակ անանց՝ ինձ և ծնողաց իմոց և եղբարց, և հոգեւոր որդւոյ իմոյ Սարգիս Վարդապետին. և ամենայն արդիւնաւորաց, և սահմանեցի ծառարարին (ծաղկաղարդ) երիցարարացն երկու սպիտակ յերեցն տալ. և միաբանքն ետուն մեզ Զատիկի ճրագաւոյցն զամէն եկեղեցիս պատարագել Դաւթի, և զկնի ելից մերոց մեզ և Դաւթի. թ. 216. (1273): »

Ի կամար գրան մեծի տաճարին:

«Ի թուին Նկն. (1016) ես Մուկն որդի Հոնաւորայ շնորհիւն Աստուծոյ նոր նորոգեցի զսուրբ կաթուղիկէս՝ որ աւերեալ ի սաստիկ չարժմանէ. և ետու զագարաի իմ՝ գանձով զնաժ վասն փրկութեան հոգւոյ իմոյ և մեղացս թողութեան և պարտին ինձ յամենայն տարի զՎարդապետին պատարագել անխափան, որ պակասացնել Զանայ, նղովս աւցէ յԱստուծոյ»:

Ի սեանս գրան նոյն եկեղեցւոյ.

«Ի թուին ՈՂԲ. (1243) Շնորհիւն Աստուծոյ ես Դաւթ ծա-

(*) Աստ առանց կարծեաց բանն է վասն սոյն Սադունի, զորմէ Հ. 2ամ. չեանն գրէ ի պատմ. Հ. Գ. երես 257. այսպէս. «Սադուն իշխան յազգէ Մամիկոնեանց ըստ յորդորական բանից իշխանի միոյ Թաղիադեանի Բագրատունւոյ երեք ի Հաղրատ զաջ ձեռն Բարդուղիմէոսի առաքելոյն, զոր Թաղիադեանն ի ձեռս բերեալ էր ի Նեֆէրկերտ քաղաքի յաւուրս տիրապետութեան Մոնղոլաց: Սադուն էր թոռն Քուրդ Ամիրայ Արծրունւոյ յազգէն Սասունայ: Սա է նոյն իսկ Աթաբէգ Սադունն՝ որ հռչակեաց զինքն ի ժամանակս Հոլափու խանին քաջագործութեամբ ի Վրաստան, և կարգեցաւ փոխարքայ յարեւելեան Հայաստանի: Մեռաւ ի 1283 թուին: Յաւուրս տիրապետութեան նորա շատ երեւելի գործք գործեցան, և այլ աստուածահաճոյ շինուածք շինեցան, որպէս վայնն այժմեան անջինջ արձանագրութիւնքն:

ուայ առաջի սուրբ Նշանիս, ու զինչ իմ պապ Քուրդն Աւքանանց
Թոռն ու իմ հայրս Աւքանն սուրբ Նշանիս միաբանութիւն տուի
էին հաստատեցի զՍուրբ Սարգսի մուտքն զԿաթանցն այգին մագ-
րովն, և Գ. շինական, ձիթատունս և տւետարան և այլ սպասք
եկեղեցւոյ: Եւ Տէր Համազասպ և միաբանքս զսուրբ Սարգսի կի-
րակին և զերկու շաբաթի ժամն յամէն եկեղեցիքս անխափան
հոռուն մեզ, և զմեր տուեալն ով խափանէ մեր ազգիս մեղացն
տէր է առաջի Աստուծոյ և դատի ի Քրիստոսէ. իսկ կատարողքն
աւր չնային ի Տեառնէ:

Ի ներքոյ սորին ի վերայ միոյ արձանի:

Ի Թուին ՌՃԴ (1655) Ես Ապրամեանց Պապոյն շինեցի սուրբ
Նշանիս խաչկալն յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հաւրն իմոյ Բե-
րույին, մաւրն իմոյ Շամանդուխտին, և կողակցին իմոյ Խամփու-
նին եղբաւրն իմոյ և որդւոյ իմոյ:

Ի ներքին կողմն դրան ի վերոյ սրբատաշ որմոյն գրի այսպէս:

« Ի Թուին Հայոց ՌՃ. (1651) Ես քաղաքացի Խօջայ Բէհբուդս
սուրբ Նշանիս հարաւային կամարն վէր էր ընկել շինել տվի, յի-
շատակ ինձ և ծնողաց իմոց և կողակցին իմոյ: Ամէն: Շինեցաւ
յառաջնորդութեան Աւետիս արքեպիսկոպոսին ձեռամբ Առնջեցի
Նաւասարդին: » Մերձ արձանագրութեանս ծածկագրութիւնն
կամ փակագիրն է « Առնջեցի Նաւասարդ: »:

Ի կողմն արեւմտից ի վերայ որմոյն առաջի դրան մայր եկեղեցւոյն:

« Կամաւն Աստուծոյ ես մեղուցեալ ապախին Քափքալի ապա-
ւինեցայ սուրբ Նշանիս Հաղբատայ և հոռու Ծ. դահեկան ընծայ
սուրբ Նշանիս: Եւ տէր Համազասպ և միաբանքս հաստատեցին
ինձ պատարագ ի տաւնի Թեկղեայ. ով զիմ յոյսն խափանէ, դա-
տի ի Տեառնէ: »

Ի վեր քան զայս արձանագրութիւն:

« Առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Հաղբատայ Տէր Յովհան-
նիսի. Ես Գագայ Թոռն Համազասպեանց զմեր պապանց որ զՇա-
տոյ խաչերն տուեալ են՝ ու զիմ հաւր միաբանութիւնն հաստա-
տեցի ի տեղս, և միաբանքս սահմանեցին մեզ պատարագ ի տաւնի
Աւետեաց Աստուածածնին զամէն եկեղեցիքս. որչափ մենք կեն-
դանի եմք մեր ծնողացն առնեն, և յետ մեր ելից մեզ կատարել
պարտին: Ե. Խորեշահին առնեն. կամեցողք խնդրոյս մերոյ աւրհ-
նի: յԱստուծոյ: »

Ի ներքոյ սորա.

« Կամաւն Աստուծոյ ես Խլանէ քաղաքացի մեծ յուսով միաբանեցայ տանս Հաղբատայ և ընծայեցի ըստ իմ կարի արդիւնս. Տէր Համազասպ և միաբանքս ետուն ինձ պատարագ ի տաւնի Պետրոսի, որք կատարեն աւրհնին յԱստուծոյ » :

Ի մէջ փոքր գաւթի, որ կայ առաջի աջակողմեան դրան սուրբ Նշանի ի ներքուստ ի կողմն Հիւսիսոյ :

« Կամաւն Աստուծոյ Պատրոն Ալիայ և որդին իւր Դաւիթ մեծ յուսով միաբանեցան սուրբ ուխտին Հաղբատայ : Եւ մեք Տէր Յովհաննէս լրմամբ եղբարցս սիրով ընկալաք և տուաք նոցա պատարագ զեկեղեցւոյ Շողակաթիս յամէն եկեղեցիքս, կատարիչքն աւրհնին յԱստուծոյ : »

Ի ներքոյ սորա.

« Յուսովն Աստուծոյ միաբանեցաւ սուրբ Նշանիս Հաղբատայ Շահնշահ և ետ արդիւնս ըստ իւրում կարի : Եւ մեք Տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցուք Ա. պատարագ յամէն տարի ի տաւնի Աթանասի : Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ : Այլ և յուսոյ նորա տուաք տեղի գերեզմանի դրան եկեղեցւոյս » :

Ի կամար հարաւային դրան Համազասպի՝ որ այժմ ծածկեալ է սրմով :

« Յուսովն Աստուծոյ և սուրբ Նշանին Հաղբատայ մեք երեք եղբարքս—Սիանդարս և Աւհնւլարս և Իսբալս միաբանեցաք և տուաք ընծայ ըստ մերում կարի : Տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցին, և ետուն մեզ պատարագ ի տաւնի Թէոդոսի թագաւորին. որչափ մեք կենդանի եմք մեր ծնողացն առնեն Գրիգորոյ և Սաթուհին. և յետ ելից յաշխարհէս երեքն մեզ և երկուքն նոցա : Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ : »

Ի կողմն Հիւսիսոյ :

« Կամաւն Աստուծոյ և սուրբ Նշանիս ես Ախատելս ու Ռուզուքան հաւր Աշոյ՝ զմեր հայրենի այգիքն՝ զգնւածն Պապանց այգին և զՋեշանց տունն և . . . որ իւրեանց հայրենեաւքն կացուցին սուրբ Նշանիս ընծայեցաւ ի գրատունս, Տէր Յովհաննէս և միաբանքս ետուն մեզ պատարագ ի տաւնի առաքելոյն Բարդուղիմէոսի յամենայն եկեղեցիքս, մեր կենդանութեամբ մեր հաւրն առնեն, և յետ մեր ելիցմերն է, կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

(Կըշիւտեմիսն) :

Ռոստամ—Բէկ երդնկեանց :